

## Ի մէջ այլոց՝ անցողակի ակնարկություն - Արմէն Յարութիւնեան

Ն.Բ.Ը.Մ.-ը ունէ մէկուն «պապային մալը» չէ, ոչ ալ 16-երուն:

Այս ազգօգուտ միութիւնը ծնաւ ազգին ծոցէն եւ կը պատկանի հայ ազգին:

Անիմաստ փառաբանանք մը վնասակար է միայն:

Ամէն մարդ կը սխալի եւ մեծ քաջութիւն կը պահանջէ ինքնաքննադատութիւնը:

Նարիւր ամեակի այս օրերուն Մելգոնեանի փակումը ամէնէն ամօթալի բանն էր որ կրնար պատահիլ եւ պատահեցաւ: Եւ իբր Ն.Բ.Ը.Մ.-ի երիցս վերջերան անդամ պիտի չկարենա՞մ մատնանիշ ընել կարգ մը սխալներ - այն ատեն ինչի՞նչ անդամն եմ: Կը նշմարեմ որ Մելգոնեանի վաճառքով ուրախացողներ կան եւ այս՝ մի քանի ողորմելի միլիոններու համար, երբ անդին մեծ գումարներ կորսուած են առյաւէտ, “bad management” -ի պատճառաւ, որուն մանրամասնութիւններուն ծանօթ են 16-երը կամ արդեօ՞ք ...

**Դարասկիզբի հիմնադիրներուն տեսիլքները գոյություն չունին այսօր:**

100-ամեակը եթէ ճառախօսութեամբ եւ պտոյտներով պիտի տօնենք, ափսոս պիտի ըլլայ:

Այս դարադարձին պէտք էր կոթողային իրագործութիւն մը ըլլար - առանց «մասրաֆ»ին նայելու:

Ո՛վ գիտէ - թերեւս ալ պատրաստած են: Կ'ապրինք, կը տեսնենք:

(Թաղուած՝ Նարեգարոյց - «Նոր Կեանք», Փետր. 2, 2006)